



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

22.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/39

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/26-3/14710-17 գրությամբ «Վեդիշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 10.08.2017թ. թիվ 2033 գրության հիման վրա, 11.08.2017թ. թիվ 03/26-3/14710-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Վեդիշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Վեդիշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 11.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/14728-17 գրությամբ դիմել է «Վեդիշին» ՓԲԸ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 10.08.2017թ. թիվ 2033 գրության հիման, 11.08.2017թ. թիվ 03/26-3/14710-17 գրությամբ խորհրդում նախաձեռնել է «Վեդիշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, սակայն «Վեդիշին» ՓԲԸ-ն խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով խորհրդի 18.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը 10.08.2017թ. թիվ 2033 գրությամբ ներկայացրել է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳՀԱՇՁԲ-ՀՀԿ-17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող-անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար նախատեսված Քանաքեռի և Նուբարաշենի ՌՀՄ-ների կայմերի վերանորոգման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՇՁԲ-ՀՀԿ-17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցել է «Վեդիշին» ՓԲԸ-ն և զբաղեցրել է առաջին տեղ, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Վեդիշին» ՓԲԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 10.08.2017թ. թիվ 2033 գրությամբ հայտնած դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/39 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/39 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար Քանաքեռի և Նուբարաշենի ՌՀՄ-ների կայմերի վերանորոգման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՀԿ-17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ Ընթացակարգի թիվ 1-2-րդ չափաբաժինների մասով, հայտ է ներկայացրել «Վեդիշին» ՓԲԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ 07.08.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարվել է հարցում՝ ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.08.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վեդիշին» ՓԲԸ-ն 03.08.2017թ. դրությամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ունի 1 106 445 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

4. Նույն արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «Վեդիշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունները համարել

իրականությանը չհամապատասխանող համաձայն՝ 07.08.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված գրավոր եզրակացության:

5. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, Ընկերության հայտը մերժել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/26-3/14710-17 գրությունը, «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 10.08.2017թ. թիվ 2033 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած

հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պարզվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար Քանաքեռի և Նուբարաշենի ՌՀՄ-ների կայմերի վերանորոգման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՀԿ-17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ Ընթացակարգի թիվ 1-2-րդ չափաբաժինների մասով, հայտ է ներկայացրել «Վեդիշին» ՓԲԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուի կողմից ընթացակարգի շրջանակներում 07.08.2017թ. հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.08.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վեդիշին» ՓԲԸ-ն 03.08.2017թ. դրությամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ունի 1 106 445 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որի հիման վրա Ընկերության հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ մերժվել է:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդն արձանագրում է, որ «Վեդիշին» ՓԲԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմք չի հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/26-3/14710-17
գրությամբ «Վեդիշին» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 04105237) գնումների գործընթացին
մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով
նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել
դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ